ԳՆԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ. Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին (X–XIV դդ.). *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2002, 136 էջ:*

Հայոց միջնադարյան հռչակավոր քաղաքամայր Անիի սոցիալ-տնտեսական, քաղաքական և հոգևոր-մշակութային պատմության հարցերը վաղուց ի վեր գտնվում են հայ և օտար հետազոտողների (Ն. Սարգիսյան, Ղ. Ալիշան, Ն. Մառ, Հ. Օրբելի, Թ. Թորամանյան, Վ. Բարթոլդ, Կ. Բասմաջյան, Ս. Ավագյան, Թ. Հակոբյան, Կ. Մաթևոսյան, Դ. Ղիփչիձե և շատ ուրիշներ) սևեռուն ուշադրության կենտրոնում: Դա պայմանավորված է X–XIV դդ. ոչ միայն Հայաստանի, այլև մեր տարածաշրջանի կյանքի տարբեր բնագավառներում Անիի դժվար գերագնահատելի ավանդով: Թվում էր, թե Անիին նվիրված բազմաթիվ ու տարաբնույթ հետազոտություններից հետո անկարելի է այդ քաղաքի մասին նոր խոսք ասել, սակայն դրախոսվող մենագրությունը եկել է մերժելու նման մտայնությունը: Դրանում Գ. Գրիգորյանը գիտական շրջանառության մեջ եղած սկզբնաղբյուրների սպառիչ օգտագործմամբ և դրանց շուրջ եղած բազմաբնույթ գրականության բարեխիղճ հաշվառմամբ ու համադիր քննությամբ մանրակրկիտ վերլուծել է ըստ Իբն ալ-Ասիրի և Մատթևոս Ուռհայեցու համապատասխանաբար ավելի քան 500 ու «հազար և մեկ» եկեղեցի ունեցող Անիի կրոնական հաստատությունների տնտեսական գործունեությունը X–XIV դդ.:

Համարձակորեն մերժելով մեզանում ընդունված հետազոտության ավանդական եղանակը, որի հիմքում ընկած է սկզբնաղբյուրների եզակի տեղեկությունների հարմարեցումը կոնկրետ դրույթի հիմնավորմանը, հեղինակն արդարացիորեն շեշտը դրել է սկզբնաղբյուրների տվյալների քանակական վերլուծության վրա: Դրա շնորհիվ Գ. Գրիգորյանը հաջողությամբ դիտարկել է Անիի եկեղեցիներին ու վանքերին անհատ մարդկանց կատարած նվիրատվությունների չարժը, պարզել պատմական կոնկրետ ժամանակահատվածում կայքի գերակշռող տեսակը, ինչքով հարուստ հոգևոր հաստատությունները, դրանց կալվածքների կառուցվածքը, եկամտաբերությունն ու գները, կայքի նկատմամբ իրավունքի հիմնական ձևերը, նվիրատուների սոցիալական կազմը և հարակից այլ հարցեր, որոնցից շատերը մեզանում առաջին անգամ են հատուկ հետազոտության առարկա դարձել: Ասվածի հաշվառմամբ՝ Անիի հոգևոր հաստատությունների վերաբերյալ մեր պատկերացումներն առավել առարկայական ու որոշակի են դարձել:

Գրախոսվող մենագրությունը բաղկացած է առաջաբանից, ինը ենթահատվածներից ու հետևություններից: Այն օժտված է քննության արդյունքների հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփումներով, ինչպես նաև գիտական ցանկացած հրատարակության անհրաժեշտ անձնանունների և տեղանունների ցանկերով:

Առաջաբանում Գ. Գրիգորյանը հակիրճ արժևորել է X–XIV դդ. Հայաստանի կյանքի տարբեր ոլորտներում Անիի ակնառու դերը, իրավացիորեն նկատելով, որ Հայաստանի հասարակական-տնտեսական կյանքում այդ քաղաքի դերը սպառիչ չի ընկալվի, եթե անտեսվի հոգևոր-կրոնական Անին: Դա օրինաչափ է, քանզի Անիի ու նրա մերձակայքի եկեղեցիներն ու վանքերը տնտեսական որոշակի կարողությամբ օժտված հաստատություններ էին: Անդրադառնալով ուսումնասիրության աղբյուրագիտական հենքին, հեղինակը նշել է, որ դրանք վիմական արձանագրություններն են, մասամբ նաև մատենագրական վկայություններն ու հնագիտական պեղումների արդյունքները: Ապա Գ. Գրիգորյանը ներկայացրել է Անիի վիմագրերի ժողովածուները և պեղումների արդյունքներն ամփոփող գրքերը՝ տալով

դրանց կազմողների և հեղինակների աշխատանքի անաչառ գնահատականը: Անիի եկեղեցիների ու վանքերի նվիրատվական արձանագրությունների թվագրության հաշվառմամբ Գ. Գրիգորյանը եզրակացրել է, որ դրանց ժամանակագրությունն ընդգրկում է 994-ից մինչև 1340-ական թվականներն ընկած պատմաշրջանը: Այն բաժանելով երեք շրջափուլի՝ 994–1050 թթ., 1051–1150 թթ. և 1151–1340-ական թվականներ, նա նկատել է, որ դրանք ստույգ արտացոլել են իրենց ժամանակի ոչ միայն Անիի, այլև երկրի տնտեսական ու քաղաքական վիճակը: Դրա վառ վկայությունն է այն, որ առաջին և երրորդ շրջափուլերում նվիրատվություններն առատ են, իսկ երկրորդում թյուրք-սելջուկյան տիրապետության առավել ծանր շրջանում, բացակայում են: Նվիրատվությունները, ըստ իրենց բնույթի, Գ. Գրիգորյանը բաժանել է երկու խմբի՝ անշարժ և շարժական: Առաջինի մեջ մտել են գյուղերը, կալվածքները, այգիները, արտերը, տները, կրպակները, հյուրատները, բաղնիքները, ձկնորսարանները, ձիթհանքերը և այլն, իսկ երկրորդի մեջ՝ եկեղեցական սպասքը, հարդարանքի միջոցները, ձեռագիր մատյանները, դրամական միջոցները և այլն: Նվիրատվության տեսակ էին նաև Անիի հոգևոր հաստատություններում կատարված շինարարական ու վերանորոգման աշխատանքները, որոնք ևս համապատասխան քննության են արժանացել:

Գրքում մանրամասն ներկայացվել-նկարագրվել են Անիի կրոնական հաստատություններին կատարված տարբեր նվիրատվությունները և պատմագիտական ու լեզվագիտական հյուսկեն քննությամբ համոզիչ փաստարկներով բացահայտվել վիմական արձանագրություններում հիշատակվող ավելի քան մեկ տասնյակ բառ-եզրույթների (կրպակ, բազըզնոց, փողոցկտեր, սագոն, տակառք, զուկակ, Սաբիլ, կորդ, միլ, կապիճ, փնդուկ, կամար, խանապար, չարեք, կառնուտ և այլն) իմաստն ու նշանակությունը, ինչպես նաև մի շարք իմաստամոտ բառերի յուրահատկություններն ու ընդհանրությունները: Քաջածանոթ լինելով այս բնագավառում նախորդ հետազոտողների (Ն. Մառ, Կ. Բասմաջյան, Ս. Ավագյան, Գ. Սարգսյան և ուրիշներ) պրպտումներին, հեղինակը բարեխղճորեն արձանագրել է նրանց ավանդը և հարկ եզած դեպքում գիտական էթիկայի նորմերի խստիվ պահպանմամբ ոչ միայն բանավիճել նրանց հետ, այլև մատնանշել որոշ բառաքննություն-ստուգաբանությունների բուն հեղինակին: Անվարան պնդելի է, որ Գ. Գրիգորյանի տքնաջան պրպտումների շնորհիվ հայ վիմական արձանագրություններում հանդիպող բառ-եզրույթների ստուգաբանության, ինչպես նաև որոշ արձանագրությունների ընթերցումների սրբագրման դժվարին, բայց շնորհակալ ասպարեզում մի նոր առաջընթաց քայլ է կատարվել.

Աշխատության մեջ ցույց է տրվել, որ Անիի ու մերձակայքի բազմաթիվ եկեղեցիներից ու վանքերից խոշոր սեփականատերեր են եղել Զաքարեի ու Սուրբ Գրիգոր եկեղեցիները և որ այդ քաղաքի հոգևոր հաստատությունների տիրույթները ոչ թե միասնական կենտրոնացված համալիրներ են եղել, այլ հիմնականում Այրարատում ցրված տարատիպ մանր տիրույթներ: Հեղինակը ներկայացրել է Անիի կառույցների (պանդոկներ, հյուրանոցներ, կրպակներ, կամարներ և այլն) ճարտարապետական կերպարն ու դրանց կիրառական նշանակությունը, տների բազմաձևությունը, ինչպես նաև վանքերին ու եկեղեցիներին պատկանող տիրույթների կառուցվածքը, դրանից բիոզ տիպերն ու այլ հատկանիշները և, մասնավորապես, ներկայացրել հողատիրության ձևերը: Բացահայտվել է, որ Անիի հոգևոր հաստատություններին ընծայված շարժական, հատկապես անշարժ գույքը, իբրև կանոն, եղել է նվիրատուի կողմից նախապես գնված, ինչն իր հերթին վկայում է X դ. վերջերին – XIV դ. սկզբներին Հայաստանում և, հատկապես, վաճառաշահ Անիում ապրանքադրամական հարաբերությունների խիստ բարձր մակարդակը: Ըստ Գ. Գրիգորյանի անվրեպ դիտարկման, դա նաև միջինասիական և մերձավորարևելյան քաղաքների հետ Անիի առևտրատնտեսական սերտ կապերի արդյունք էր: Այս առումով սլատահական չեն նշված տարածաշրջանների քաղաքների

հասարակական-տնտեսական կյանքի հետ Անիի քաղաքային կյանքի որոշ ընդհանրություններ:

Գրախոսվող աշխատության մեջ պատշաճ տեղ է հատկացվել X–XIV դդ. Հայաստանի դրամական համակարգի ուսումնասիրությունը, ինչը հեղինակին թույլ է տվել բացահայտելու եկեղեցապատկան ու վանքապատկան ունեցվածքի տարբեր տեսակների գներն ու եկամտաբերությունը: Ընդ որում, Դ. Գրիգորյանը սկզբնաղբյուրների նորագույն տվյալների հաշվառմամբ Թ. Ավդալբեկյանի կազմած հայտնի ցուցակում սրբագրումներ կատարելով ապացուցել է, որ քննվող ժամանակաշրջանում պատարագներն ունեցել են միջինը 20 դահեկան դին:

Ինչպես և պետք էր սպասել, գրքում զգալի տեղ է հատկացվել նաև Անիի եկեղեցիների ու վանքերի նվիրատուներին: Նվիրատվական արձանագրությունների և հարակից այլ սկզբնաղբյուրների միջոցով հեղինակն ընդհանուր պատկերացում է տվել այդ մարդկանց մասին, որոնցից իր նվիրատվություններով աչքի է ընկնում Տիգրան Հոնենցը, և հնարավորինս ճշտել նրանց սոցիալական պատկանելությունը: Համապատասխան ցանկից պարզվում է, որ Անիի վիմագրերում վկայված նվիրատուների քանակը հիսուն է: Նրանք ներկայացնում են հասարակական վեց շերտեր՝ սկսած թագավորից ու թագավորական ընտանիքի անդամներից, վերջացրած տարբեր մասնագիտության տեր հասարակ մարդկանցով:

Ընդհանուր առմամբ գիրքն ունի կուռ կառուցվածք և, աննշան բացառություններով, շարադրված է սեղմ գրելաոճով ու դեղեցիկ հայերենով: Այն ավելի կշահեր, եթե հատկապես մարզպանության հաստատության ինստիտուտին և, մասնավորապես, Վահրամ Պահլավունուն ու Զաքարե Զաքարյանին ոչ իբրև նվիրատուների վերաբերող հատվածներն ավելի կարճառոտ լինեին: Ասվածը, սակայն, չի նսեմացնում գրախոսվող աշխատության գիտական բարձր արժեքը: Մենագրությունը շահեկան ու մնայուն ներդրում է Անիի պատմության ասպարեզում և, վստահ ենք, հեղինակի ոչ վերջին արժեքավոր աշխատությունը հայոց միջնադարյան պատմության դեռևս մութ ու խրթին հարցերի շուրջ:

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ